

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարազգայացիք գիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Мусака“

ՄԵՆԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և առաւօրեայ օրերէն):

Յայտարարութիւնները ընդունուիմ են առանձին լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ

Քաղաքական վերջին անցքերը:— Եւրոպայի
տեսուածքները: Նամակ Զարբաշէից: Նամակ
Ալեքսանդրապոլից: Ներքին լուրեր:— Արտա-
քին տեսուածքները: Անգլիա և Միթիւադ-
փաշա: Արտաքին լուրեր:— «Մշակի» հեռագիր-
ներ:— Յայտարարութիւններ:— Տեղեկացոյց:—
Բանասիրական: Տեղեկագիրք:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ԱՆՑԳԵՐԸ

Բաթումի ռուսաց զօրքերին
յանձնելը այնպիսի մի իրողու-
ղութիւն է, որ տեղիք է տալիս
մտածելու թէ Ռուսաստանի և
Թիւրքիայի մէջ խաղաղութիւնը
հաստատուած է երկար ժամանակ-
ների համար:

Եթէ ինկատի առնենք Թիւրքաց
կառավարութեան յամառ ընդդի-
մադրութիւնը Բաթումը մարքելու
վերաբերութեամբ, եթէ ինկատի
առնենք որ այդ կառավարութիւնը
գաղտնի հրահանգներով գրգռում
էր լազերին ընդդիմանալ ռուսաց

տիրապետութեան և Նիզիան էլ
նպաստում էր Թիւրքիայի դադ-
անի ձեռնարկութիւններին, կը
տեսնենք, որ Բաթումի մարքելը
մեծ նշանակութիւն ունի և հա-
կառակ դէպքում այդ հարցը կա-
րող էր նոր պատերազմի առիթ
դառնալ:

Ներկայ րոպէում լրագիրները
գլխաւորապէս զբաղված են Աս-
տրո-Ունգարիայով: Այդ պետու-
թեան մէջ սաստիկ յուզմունք կայ
և նրա մէջ եղած բազմաթիւ կու-
սակցութիւնները սաստիկ գրգռ-
ված են միմեանց դէմ: Գործը
այնպիսի կերպարանք է ստացել,
որ գուցէ կոմս Նիզարաշի, աւստ-
րիական առաջին մինիստրը, նա
որ արևելեան հարցը բարձրանա-
լու օրից մինչև այժմ կառավա-
րում էր այդ պետութիւնը, ստիպ-
ված կը լինի հրաժարական տալ:
Կոմսի հրաժարական տալը ցան-

կանում են մինչև անգամ այն-
պիսի մարդիկ, որոնք նրանից կա-
խումն ունեն, և այդ ցանկութիւնը
նոքա հրապարակապէս յայտնում
են:

Աստրիական զօրքերի ունեցած
անաջողութիւնները Բոսնիայում
և Հերցեգովինայում ծանր տպա-
ւորութիւն գործեցին այդ պետու-
թեան բոլոր հպատակների վրա:

Մինչև անգամ ունգարացի-
ները, որոնք Թիւրքերի ամենա-
ջերմ համակրողներն էին, նոքա
էլ թշնամացել են Թիւրքիայի
հետ այն ժամանակից, երբ Բ.
Դուռը սկսեց օգնել ապստամբնե-
րին:

Աստրո-Թիւրքաց դաշնադրու-
թիւնը, ինչպէս երևում է, չը
պետք է կայանայ: Այժմ ոչ
աւստրիացիները և ոչ Թիւրքերը
չեն կամենում, որ այդ դաշնա-
դրութիւնը կապվի:

Բոսնիայի և Հերցեգովինայի
ուժով վեր առնելը, աւստրիացի-
ների համար պատուի հարց է դար-
ձել: Նոքա չեն կարող ներել
իրանց կառավարութեան անհե-
ռատեութիւնը: Իրանց զօրքերի
անաջողութեան պատճառը նոքա
կառավարութիւնն են համարում:
Եւ ճշմարիտ Աստրիան փոխա-
նակ այժմ օգնական զօրքեր ու-
ղարկելու Բոսնիա և Հերցեգով-
ինա, սկզբից նրանց այն թւով
պետք է ուղարկէր, որ միանգա-
մից կարողանային վերջ դնել ա-
պստամբութեանը:

Գերմանական պարլամենտը ար-
դէն բացված է: Պահական ճառի
մէջ կայսրը յոյս է յայտնում, որ
սոցիալիստների դէմ ուղղած օրէն-
քի նախագիծը կընդունվի պար-
լամենտից:

Բնթերցողներին յայտնի է, որ
իշխան Բիսմարկ Կիսինգերման

ԲԱՆՈՍԻՐԱԿԱՆ

ՏԵԼԵԳՐԱԳՐԱԿ

Գաւառական հարստահարութեանց
կ. Պոլսի 1876 թ.

(Պաշտօնական հրատարակութիւնը ազգային
պատրիարքարանի)

(Շարունակութիւն և վերջ)

Շողային կամ կալուածական խնդիրը ասիա-
կան հաճախատանի հայոց հարստահարութիւն-
ների մէջ ամենազգաւոր խնդիրն է: Այս
խնդրի նշանակութիւնը այնքան բարձրանում է,
որքան մենք մտածում ենք, թէ տաճկաբնակ
հայերի մէջ գաղթականութիւնը դադարեցնելու
է ժողովրդին հայրենի հողի վրա ապահով կեանք
վարելու միակ միջոցը հանգիստ երկրագոր-
ծութիւնն է: Բայց ցաւում ենք, նկատելով,
որ այս խնդիրը խիստ անշնչան տեղ է բռնում
պատրիարքարանի Տեղեկագրքի մէջ, և պատ-
րիարքարանը իր տասն և եօթամեայ սահմա-
նադրական վարչութեամբ շատ փոքր ուշադրու-
թիւն է դարձրել դրա վրա, և համարեա դա-
նաւորութիւն է տուել կալուածական խնդիրը,
որ հայի կեանքի և մահու խն-
դիրն է: Այս խօսքերը զրպարտութիւն չեն, քանի
որ մենք աչքի առջև ունենք պատրիարքարանի
արձանագրութիւնները: Ամբողջ Տեղեկագրքը,
որպէս յիշած ենք, պարունակում է իր մէջ պատ-
րիարքարանի 25 տարվայ գործունէութեան շըր-
ջանը, այս 25 տարվայ մէջ կալուածական
հարստահարութիւնների մասին պատրիարքա-
րանի կողմից, մենք տեսնում ենք, մի միայն
մէկ հատ բողոքագիր որ 1875 թ.ին յունվարի
3-ին մատուցված է Բարձ. Դրան, այն ևս բաւա-
կանութիւն չէ գտել, և պատրիարքարանը լռել
է այնուհետեւ *)... Որով ընդհակառակն, տես-

նում ենք, կիրակոսի աղջկը մահմետականները
առեւանգել են, կամ Մարտիրոսի ոչխարները գո-
ղացել են, և կամ այս ինչ եկեղեցու խաչը
թուրքերը շան վրից քարէ տալով փողոցները
մանն անել,—այսպիսի սկանդալները տա-
րիներով պատրիարքարանի և Բարձ. Դրան մէջ
բանակցութեան նիւթ են դարձել... Մենք չենք
ասում, թէ դրանց մասին պետք էր լռել, բայց
և ոչ պէտք էր այնքան կարեւորութիւն տալ:
Որովհետեւ այսպիսի մասնաւոր դէպքերն պա-
տահական են, այսօր կարող են լինել, իսկ
վաղն ոչ: Բայց երբ մահմետականները գաւառ-
ների ամբողջ հայ գիւղաբնակները զաւառ-
նիկանացնում, — դա է գլխաւոր կենսական
հարցը, որովհետեւ դրանով մի ամբողջ հասարա-
կութիւն թէ նրկթագէտ և թէ բարոյապէս մա-
հանում է, և սերունդից սերունդ զրկվում է
հացից և հետեւապէս կեանքից... Բայց պատ-
րիարքարանի ուշադրութիւնը չէ գրաւում այս
հարցը...

Այս նկատողութիւններից յետոյ, մենք հաս-
նում ենք այն տխուր եզրակացութեանը, թէ
կ. Պոլսի պատրիարքարանը և այն, որ կոչվում
է ազգային սահմանադրութիւն, որքան դատարկ
բանեցով են զբաղված եղել, և որքան սա-
կաւ հասկացել են ազգի և ժողովրդի իրական
պէտքերը... Պոլսու վարդապետի գործը, Սիւր
և Ալիմամբայ կաթողիկոսների խնդիրները կ.
Պոլսի ազգային սահմանադրութիւնը իր գոյու-
թեան ամբողջ ընթացքում ծածկմեց, կղկղեց,
և համարեա իր ժամանակի ամենամեծ մասը
այսպիսի աննպատակ վիճմունքների մէջ անց-
կացրեց,—բայց մի անգամ էլ չը մտածեց, թէ
կ. Պոլսի թուլամբարներում պաւկով 45
հազար վանեցի, մեցի և այլ գաւառական հա-
մալները ինչու համար են թողել իրանց հայ-
րենիքը:

Հային խնդիրը մոռացված էր, այնտեղ յիշված
էր միայն եկեղեցական և վանքային կալուած-
ների հարստահարութեան մասին, Մենք զար-
մանում ենք, եթէ Դաւ-Յուսէյնի նման մի
մասնաւոր անձի պաշտօնակութիւնը և նրա իր
հայրենիքից տարագրվել կարող է հասարակա-
կան հարց դառնալ, որքան առաւել հողային
խնդիրը պէտք էր գրաւէր Ս. պատրիարքի ու-
շադրութիւնը:

Թէև մեզ յայտնի էին պոլսեցոց թեթևամտու-
թիւնները, թէև մենք գիտէինք, որ նրանք երե-
ւակալութեամբ են ապրում և ամենին իրա-
կան կէտի վրա կանգնած չեն, այնու ամենայ-
նիւ, կ. Պոլսի պատրիարքարանի և նրա սահ-
մանադրական վարչութեան մասին մինչև այս
աստիճան աննպատակ կարծիք չունէինք:
Բայց պատրիարքարանի Տեղեկագրքը երևան
հանեց նրա բոլոր ոչնչութիւնը: Եթէ Տաճկաս-
տանի այժմեան հանդամանքներն առիթ չը տա-
լին, գուցէ մենք երբեք չը պիտի տեսնէինք
այս Տեղեկագրքը. գուցէ պատրիարքարանը
մինչև յաւիտեան պիտի ծածկէր իր խայտառա-
կութիւնը, միշտ ինքն իրան խաբելով և
միշտ ազգին ցոյց տալով, թէ մեծ գործ է չի-
նում...

Շատ ժամանակ չէ, որ հրատարակեցաւ այն
մեծ խաբէյութիւնը — պատրիարքարանի
երևելի չըբաբարականք, որի մէջ մօտ 4 միլիոն
ժողովրդի ներկայացուցիչը յայտնում էր, թէ նա
գոհ է «բարեխնամ կառավարութիւնից»: Եւ այդ
գոհութիւնը յայտնում էր 25 տարվայ ընթաց-
քում հազարաւոր անիրաւութեանց դէմ միշտ
բողոքող և ոչինչ բաւականութիւն չը ստացող
ժողովրդի հոգեւոր գլուխը, Զարմանալի աչքակա-
պութիւն...

Արդէն ընթերցողը տեսաւ, որ պատրիարքա-
րանի կողմից գաւառական հարստահարութեանց
մասին Բարձ. Դրան մատուցած խնդիրները
(Թագրիրները) համարեա ոչ մէկը իր նշանակու-
թեանը չէ հասել, կամ մնացել է առանց պա-
տասխանի, կամ թողնվել է առանց հետեւանքի,
կամ եթէ Դաւնից հրամանագիր է ստացվել, այն
էլ գաւառների պաշտօնակալներին գործի չեն
դրել. այսպէս բոլորն անցել են ապարդիւն...
Այստեղից հասկացվում է, թէ ինչնշանակութիւն
ունի հայոց պատրիարքարանը Բարձ. Դրան առջև
և որ չափով Դուռը հոգս է տանում ոչ—մահմե-
տական ազգերի ապահովութեան մասին:

Այս այսպէս լինելուց յետոյ մենք պատրիար-
քարանի հրաշքներ գործել տալու իրաւունք չու-
նենք: Բայց մեզ զարմացնում է մէկ բան. ար-
դեօք ինչով էր պարծենում կ. Պոլսի ազգային
սահմանադրութիւնը իր 17 տարվայ գոյութեամբ—
չունենով, իր ուրախ կեցցէներով...

Այժմ հասկացանք...

կ. Պոլսի ազգային սահմանադրութիւն ուրիշ
ոչինչ չէ եղել, բայց միայն մի մանկական
խաղալիկ, որ խորամանկ դպեալը տալիս է
երեսայի ձեռքում, որ նա հանգիստ մնայ, որ
նրանով զբաղվի, չարութիւն չը գործէ... Եւ կ.
Պոլսի տղայամիտ Էֆենդիներն շատ գոհ և ու-
րախ էին այս խաղալիկով, և ամեն տարի Բօս-
ֆորի ափերի մօտ տօնում էին իրանց ողորմելի
պատրանքը...

Տաճկաց կառավարութիւնը շատ լաւ է ճա-
նաչել իր հպատակ ազգերի բնաւորութիւնը, նա
գիտէ, թէ ամեն մէկին որպէս պէտք է խաբել:
Այժմ պատրաստել է նա մի աւելի վիթխարի
խաղալիկ իր հպատակների ձեռքը տալու
համար—իր պետութեան մէջ ընդհանուր
սահմանադրական վարչութիւնը—
երկու խօսքով կը յայտնեք մեր կարծիքը. «օճը
իր շապիկը կը փոխէ, բայց խաւսիւթը չը
այն կը մնայ...»

Մէլքեղապէ

Յօդուածս վերջացնելու վրա էի, ստացայ մի
նամակ, որ վերաբերում էր վանայ հրդեհին.
Նամակագիրը վանեցի ծանօթներէս մէկն էր,
որ անձամբ ականատես է եղել անցքին: Թէև
կ. Պոլսի և Թիֆլիսի լրագրներում հրատարա-
կութիւններ եղան այդ մասին, բայց տեղեկու-
թիւնները թերի լինելով, հարկաւոր համարեցինք
այս կտորը որպէս յաւելում կցել մեր յօդուա-
ծի հետ:

Վանայ հայերի մեծ մասը բնակվում են Այ-
գեւստան կոչված արւարձանում, որ հետեւ է
բերդին, այսինքն բուն քաղաքից մի քանի ժա-
մկայ ճանապարհով: Այգեւստանից, թէ վա-
ճառականներ և թէ արհեստաւորներ, խանութ-
ներ ունեն բերդի մէջ, վաղ առաւօտեան դալին
են քաղաքը, մինչև երեկոյ զբաղված են առե-
տուրով և արեւ մոտեցնելուց յետոյ դառնում են
իրանց տները. խանութները մնում են հասա-
ների հսկողութեան ներքոյ:

Հրդեհից մի քանի շաբաթ առաջ քուրդ բէ-
կերից մէկը բարեկամաբար յայտնում է իր ծա-
նօթ հայերին, թէ այս օրերում մահմետական-
ների կողմից ձեռնադրւում է մի մեծ վտանգ:
Հայերն առանց այս խօսքը լսելու ևս ամեն
րոպէ սպասում էին, թէ թուրքերը պէտք է կո-

*) Պատրիարքարանի ձեռքով վերջին անգամ
որպէս Տաճկաստանի հայ ժողովրդեան կողմից
մեծ եպարքոսին (սաղրէզամին) մատուցված
խնդիրների կարգում դարձեալ ընդհանուր հո-

բանակցում էր պապական նուն-
ցիի հետ: Իշխան Իսմայիլ կա-
մենում էր իր կողմը դարձնել
կղերական կուսակցութիւնը որ-
պէս զի կարողանայ աշոգութեամբ
ընդդիմանալ թէ սօցիալիստներին
և թէ ազատամիտներին, եթէ
հարկաւոր լինի: Լրագիրները մի-
մեանց հակասող տեղեկութիւն-
ներ են տալում այդ բանակցու-
թիւնների մասին: Մի բան միայն
կարելի է հաստատ իմանալ, որ
ոչ կղերական կուսակցութիւնը
բոլորովին անցաւ կառավարու-
թեան կողմը և ոչ իշխան Իս-
մայիլ խոստացաւ փոխել մայիսի
օրէնքները, որոնք ուղղված են
կաթօլիկ եկեղեցու դէմ:

Կիսիսեպէի բանակցութիւն-
ները, ասում են լրագիրները, նը-
շանաւոր փաստ են ներկայացնում
եւրօպական քաղաքականութեան
մէջ: Կորա ցոյց են տալի, որ
երկու հակառակորդներ, որոնք մի-
քանի ժամանակ առաջ պատ-
րաստ էին միմեանց ոչնչացնել,
այժմ կամենում են միմեանց ձեռք
մեկնել:

Հատ ժամանակ չէ անցել, որ
կաթօլիկ եպիսկոպոսները հնչին
յանցանքների համար կալանա-

ւորվում էին, իսկ այժմ գործը
այն տեղն է հասել, որ կղերա-
կանները յոյս ունեն փոխել տալ
իրանց դէմ ուղղված օրէնքների
մի շարք:

Վ. Տ.

ՆԱԽԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

20 օգոստոսի

Նույն քաղաքից 70—80 վերստ հեռու գէպի
արեւելք պարսից սահմանում մէկ նեղ հովտի
մէջ գտնվում է Զարբաէլ թուրքաբնակ գիւղը,
որ կառուած է շուշեցի Զիւլաւիչի Հիտիաթ ա-
ղային Այս գիւղը ունի մօտաւորապէս 125
տուն բնակիչ, որի մեծ մասը սիւննի է: Զարբաէլ
գիւղը ինչպէս երևում է մի քանի հուսթիւններից,
հաւանական է կարծել, որ 500 դարից աւելի է
որ գոյութիւն ունի: Օղը ամառը անտառներով է.
շրջը Բէօմիւրի ջրբանաակով հասնում է 25—30
աստիճան, իսկ միւս եղանակները բարեխառն
են: Այստեղի միակ կենդանացուցիչ տարրը հա-
մարվում է ասու ֆանքանի (ջրօր) ջուրը, որ
եթէ հաւատ ընծայելու լինենք մերձակայ հայ
գիւղացիների աւանդութեան, Լուսաւորչի օրից
է դուրս բերված, սրանց ասածը ոչ միայն հա-
ւանականութիւն է ասանում, երբ ֆանքանի
սալայատակի վրա փորված խաչերի տեսնում
ենք, այլ և կարծել է տալիս որ երբեք հայա-
բնակ ևս եղած է: Տեղացիք պատմում են որ
առաջ այնպէս առատ է եղել այս բանքանի
ջուրը, որ մատակ ձին անցնելուց յետոյ իր
ընտանիքը միւս փուլում է մնացել ջրի յորու-
թենից, այժմ երկու ջրաղացի ջուր է դուրս
գալիս: Այս ֆանքանի առաջից սկսվում են ջաբ-
րաէլցիների աղբիւրները, որոնց պողպատե և ան-
պողպատ, մեծ ու պոսիկ ծառերը, թուփ ու մա-
ցառ ի միասին, այնպէս խառն դրսեւթեմք

տորեն նրանց, որովհետեւ Արդ-իւ-Ֆէթթան բէկ
չարագործը ճիգրանակերտից վերադառնալով,
դեռ վաղուց բոլոր հայերը կոտորելու հրաւէր
կարգադրած էր:

Հայը իր կենսից առաջ մտածում է իր հա-
րստութեան մասին, որովհետեւ վերջինը աւելի
թանկացին է նրա համար: Այս սպառնալիքները
լռելով, հայերը ոչնչով չեն պատրաստվում գա-
լու վտանգի առաջն առնելու, այլ աշխատում
են մի կերպով աղատել իրանց իրեղէնները: Այ-
գեստանցի հայերը իրանց տներում գտնված
թանկագին իրեղէնները տանում են քաղաքը և
հաւաքում են իրանց խանութներում, մտածե-
լով, թէ այնտեղ աւելի ապահով կը մնան, որով-
հետեւ բերդի մէջն է, այնտեղ զինուորներ կան,
ոստիկանութիւն կայ և այլն: Եւ այսպէս հայերի
բոլոր հարստութիւնը կենտրոնանում է շուկա-
յում:

Գիշերով հասանքները նկատում են, որ զանա-
զան կողմից խանութներից այստեղ և այնտեղ
մուկ է դուրս գալիս, հասկանում են, որ կրակ
կայ: Նրանք չտապում են խանութատերերին
իմացում տալու, բայց ոստիկանութիւնը արգե-
ւում է: Նոյն միջոցին բերդի զօրանոցի գլխից
լսելի է լինում փողի ձայն, իսկայն զինուորնե-
րով չընթացաւ չէ շուկան: Զինուորների մէկ
մասը բռնում է փողոցների մօտը և չէ թող-
նում հայերին, մինչև անգամ խանութատէրերին,
մօտենալ հրդեհի տեղը, իսկ միւս մասը սկսում
է կողքատեղ խանութների դռները, ոչ միայն
նրանց, որոնցից կրակի նշոյլներ էին երևում,
այլ և այն խանութների, որոնք շատ հեռու էին
հրդեհից: Վերջինների մէջ իրանք զինուորները
կրակ են ձգում և մի քանի ժամկէտ մէջ առ-
բողջ շուկան բոցավառվում է հրդեհի մէջ:

Բայց ինչ են լինում ապրանքները:
Մեծ մասը զինուորներին և ոստիկանութիւնին
կողովարարում է, եւ դեռ հրդեհը բոլորովին չը ճա-
րակված, շուկայում յայտնվում է մի խառնի-
ճաղանճ բազմութիւն—թուրք, քուրդ և այլ գիւ-
ղացի մասնատակներ—գրանք, որպէս երևում
է, առաջուց տեղեկութիւն ունենին պատահելու
անցքի մասին, և չընկալալ գիւղերից հաւաքվե-
լով, ցերեկով թաքնված են եղել թուրքերի
տներում, և զինուորներից ու ոստիկաններից
մնացած ապրանքը դրանք են յափշտակում:

Մասնատակների առջև բաց է լինում կողո-
պտի ասպարէզը, մօտ չեն թողնում միայն
հայերին: Նամակագիրը աւելցնում է, թէ քա-
ղաքի հարուստ հայ վաճառականներից, մի կը
մնչև անգամ առաջարկում է 500 լուրս զինու-
որական զխաւորին, որ իրան թող լուրս իր խա-
նութից ազատել միայն հայտնի գրքերը և այլ
թղթեր, դարձեալ մօտ չեն թողնում Այգես-
տանցի հայերը հրդեհի մասին ոչ ինչ չեն հաս-
կանում, որովհետեւ հեռու էին, իսկ այն հայերը,
որ բերդի մէջն են բնակվում, նրանց էլ մօտ
չեն թողնում:

Եւ այսպէս, ապրանքներից ինչ որ թանկա-
զին էր, բոլորն յափշտակվում է, բայց ինչ որ
անպէտք էր, կրկին ձգվում է կրակի մէջ: Եւ
որպէս զի հրդեհը յաջող կերպով ճարակվել, աւե-
լացնում են նրա վրա հեղտ վառվող նիւթեր,
որպիսի են՝ վառօդ, նաւթ և այլն: Կողովարար
ապրանքները մասամբ թաղցնում են թուրքերի
տներում և մասամբ կրում են դէպի մօտակայ
գիւղերը: Այն գիւղեր Աւանց գիւղի նաւահան-
գետի մէջ կանգնած են լինում մի քանի նա-
ւակներ, յատկապէս այն նպատակով. ընդամենը
կողովարար են 2000 խանութներ, որոնցից 1300-ը
կրակից բոլորովին գերծ են մնացած, միայն զըռ-
նեքը խորտակել են, իսկ 700-ը այրվել է: Այս
խանութները ըստ մեծի մասին պատկանում են
հայերին, բայց նրանց թուրք գտնված թուրքերի
խանութները նամակագրի կարծիքով առաջուց
զատարկված են եղել:

Նամակագրի կարծիքով այս անցքը պատա-
հական չէ, այլ առաջուց խորհված և տնօրին-
ված մի դաւադրութիւն է, որի գաղտնիքը պահ-
ված է եղել զինուորական պաշտօնէութեան և
տեղային կառավարութեան երեւելի անձինքների
մէջ: Եւ գիւղացի կամ քաղաքացի մասնատա-
կաններն, դաւադրութեան հոտը առնելով, նշա-
նակեալ գիւղերը հաւաքված են եղել, որ իրանք
էլ մասն ունենան ընդհանուր կողովարարից: Եւ
թուրք բէկի հրդեհից մի քանի շաբաթ յայտնում
են իրանց այն, որ հայերը երկուր կրելով, նաև
իրանց տնային հարստութիւնը հաւաքեն շու-
կայում: Որովհետեւ հայ հարստութիւնն թէ է
մասնատական ամբողջ կասկածներ ունէր, բայց
նա կառավարութիւնը և նրա զինուորական ու-

ղաւարտված են, որ կատարեալ լաբիլիթ են
ձեռնարկում:

Պողպատե ծառերի մէջ առաջին տեղը բռնում
է խաղաղը, որ դեռ կանաչ ու թթու ժամանակն
է կուլ գնում և անհանդիման են միայն ագահ
փողովորի սրտեան աչքերից փայտած մի քանի
ողկոյգներ, այն էլ թուշուների կտուցին են զոհ
դառնում: Իսկ ինչ կը վերաբերի միւս պտուղ-
ներին, ինչպէս՝ դեղձի, կեռասի և ծիրանի, միայն
ծաղկած ժամանակը կը տեսնես. ծաղիկը թափ-
վելուն պէս ամեն մի ծառի վրա տաւը մերկ
թուրքի լամպիւնների թթուրի պէս ոչ միայն խալ
պտուղները, այլ և տերեւն էլ են փչացնում:

Ժողովուրդը կեղտոտ, ծոյլ, անհոգ, կուսաէր
և աշխատութենից փախչող է. լաւ կը համարի
ամբողջ օրը բաց բերանով արեգակի տակ պառ-
կել, քան գնալ մշակութիւն անել: Իր քաղցած
րնտանիքի փորը կշտացնելու և մերկութիւնը
ծածկելու համար, Լնդհանրապէս ժողովորդի միակ
պայքաւորները եղած է չերամպայտութիւնը: Տա-
րին միջին թուով այստեղ 30—35 գրվանքայ չե-
րամի սերմ կը պահվի, բայց իրանց տղիտու-
թենից և անհոգութենից մեծ մասը փչանում է.
միայն քիչն են երկրագործութեամբ և անաս-
նապահութեամբ պարապում:

Այս գիւղը 1875 թվականից ի վեր փոքր ի
շատէ կեղեկութիւն ստացած է գաւառապետ
և դատարար նստելու շնորհիւ: Մինչև այդ մի-
ջոցը միայն մի խանութ կար, ուր ամեն բան
վաճառվում էր, այժմ երեսուցից աւելի են 2ը
նայելով գաւառապետ և դատարար նստելուն,
դարձեալ առաջին աւազակութիւններն, սպա-
նութիւններն ու չարագործութիւններն չարու-
նակվում են: Թերևս նոր գաւառապետի շնոր-
հիւ վերջանան այս անկարգութիւնները:

Գիւղի արեւելակողմը ընկած զառիվարի վրա
գետեղված է Զարբաէլի մաքսատունը (TAMO-
KHA), որ Նրասիի վրա Նախիջևանից յետոյ ա-
ռաջին տեղն է բռնում: Մինչև ռուս-թուրքական
պատերազմը այստեղ Պարսկաստանից շաբաթ
միջին թուով չորս կարանան կը գար, իսկ այժմ
զգալի կերպով իջած է այդ թիւը. պատճառը հա-
մարվում է ռուս գործարաններից դուրս եկած
փայլուն չմերի էմանազին լինելը և մասամբ այս-
տեղի մաքսի թանգ լինելը, մանաւանդ այս միջոց-

ներս. պօլիտիկայի լսելի վաճառականը առ-
նում է 8—9 ռուբլիով և այստեղ մաքսատունը 5
ր. 15 կօպէկ է հաշվում, այս բանից է որ չուշեցի
վաճառականները առաջվան պէս տաք սրտով չեն
յաճախում թաւրիգ. թէ մաքսատուն և թէ այլ
դատաստանական տեղերի պաշտօնեաները զըլ-
խաւորապէս հայեր են: Շատ ցանկալի կը լի-
նէր որ հայերը մի փոքրիկ ազօթատեղի չինէին
իրանց համար, որ հանդիսաւոր օրերը ստիպ-
ված չը լինեն եկեղեցու սրբութիւնը մաքսա-
տան խարխուլ ու փոշոտ սենեակում դնելու.
այդպիսի մի շնութիւն շատ էման կը նստի
այստեղ:

Զարբաէլու մէջ կայ արքունական դպրոց, ուր
30 հայ տղաներ են սովորում մերձակայ գիւ-
ղերից հաւաքված. չը նայելով դպրոցի նոր բաց-
ված լինելուն, աշակերտները ռուսերէնի մէջ բա-
ւականին առաջագիւծ են եռանդաւոր ուսուցչի
շնորհիւ:

Զարբաէլու շրջակայքում յիշատակելու ար-
ժանի է Աղօղլան (ճերմակ տղայ) կոչված սրբա-
վայրն, որ մի աւերակ մատուռ է: Այստեղ ամեն
վարդավառին շրջակայ գիւղերից մեծ բազմու-
թիւն է գալիս ուխտ. Աղօղլան անունը թուր-
քեր տալիս են Լուսաւորչի թուր սուրբ Կրիս-
թոս հայրապետին, որ վատնեան դպարի մէջ նա-
հատակվելով, մարմինը փոխադրվեցաւ Ամարաս
գիւղը, գուցէ այդ սրբի մասունքներից այստեղ
ևս ամփոփված լինեն, որ այդ յիշատակը պատ-
ւում է հայ գեղջուկը:

Այս տարի Զարբաէլ գաւառի մէջ չը տեսն-
ված առատութիւն է հացի, թերևս այստեղի
թուրքերը խրախուսվին սրանից ու երկրագոր-
ծութեամբ պարապեն, փոխանակ իրանց օրերը
կուտով, ծեծով ու հայոյանքով անցկացնելու:

Վ. Մ. Շ.

ՆԱԽԱԿԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

27 օգոստոսի

Ալեքսանդրապոլ քաղաքի զանազան ազգա-
բնակութիւններից մի փոքրիկ մասը բաղկանում
է գրեթէ ոչ աւելի քան 40 տուն հայ-կաթօլիկ-
ների հետ պատերազմ ծագելու միջոցին նրանք
թշնամուռն ձեռնառութիւն անեն, և այս պատ-
ճառով մտածել է առաջուց նիւթագէտ տկա-
րացնել նրանց: Մեր կարծիքով, այս ենթադրու-
թիւնը անտեղի է, որովհետեւ տաճկաց կառա-
վարութիւնը շատ լաւ է ճանաչում հայերին, նա
գիտէ, թէ որքան ընտելացած են հայերն իր
բունակալութեանը, նա գիտէ, թէ որպիսի սիրտ
են կրում հայերը... Մենք նայում ենք այս
անցքի վրա, որպէս մի խորամանկութեամբ հնա-
րված յափշտակութեան վրա, աւելի ոչինչ:

Ընդհանուր վնասի մասին նամակագիրը զը-
ժուարանում է հաշիւ տալ, բայց կարծում է, թէ
շատ մեծ պէտք է լինի, քանի որ վաճառ վա-
ճառականութիւնը հայերի ձեռքում է, և վաճառ
իր չընկալալ գաւառների աւաւորական կենտ-
րօնն է:

Վաճառ հրդեհի անցքի մէջ նկատվում է մի և
նոյն երևոյթը, ինչ որ մենք տեսանք գաւառ-
ների բոլոր հարստահարութեանց մէջ, ուր սպա-
նութիւնները ամենափոքր թվանշաններէն կազ-
մում Այստեղ ևս ոչ մի սպանութիւն չէ պա-
տահում, երևում է, որ հայերն իրանց ձակա-
տագրական թուրապատութեամբ կանգնած, նա-
յելիս են եղել, թէ որպէս կողովարար են
իրանց... Բայց վաճառ մէջ հայերն աւելի բազ-
մաթիւ են քան մասնատակները... Բայց հայը
կանքի կուտ մէջ ունի իր առանձին դէն-
քերը իր կորուստը դարձնելու համար: Վա-
նեցի հայերն հեռագրում են իրանց Վ. Պօլ-
սում եղած ընկերներին. «մեզ այստեղ կողովա-
րարից, դուք էլ այնտեղ ումից որ ապրանք էք
առած, փողը մի տուէք...»

Վաճառ հրդեհի մասին դրանից աւելի դատել
առ այժմ անտեղի է, քանի որ գործը բոլորո-
վին պարզված չէ: Վ. Պօլսի լրագրները մէջ
արդէն ծանուցված էր, թէ Բարձ. Գունից ա-
ռանձին մասնատողով նշանակված է այս անցքը
քննելու համար: Կը սպասենք, մինչև մասնա-
ժողովը իր գործը վերջացնէ, թէ և հաւատացած
ենք, որ ճշմարտութիւնը ոչ բոլորովին պիտի
երևան լինի:

1877 ամի 10 յունվարի

Մէլիքզադէ

